



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ԿԱՌՉԱԾ ՄՆԱՆՔ ՀՈԳԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՈՒՆ

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Կիրակի, 1 Ապրիլին տօնեց Ծաղկազարդ՝ Զրիստոսի Երուսաղեմ յաղթական մուտքին տօնը:

Ս. Յարութեան տօնը շաբաթով մը կանխող այս տօնը կը յատկանշուի հոգեւոր ու ժողովրդային տօնախմբութիւններով: Այս տօնին, մեր եկեղեցիներու խորաններու վարագոյրը Ս. Պատարագի ընթացքին կը բացուի Մեծ Պահոց շրջանի փակման շրջանէն ետք, իսկ Պատարագի ընթացքին, կը կազմուի հանդիսաւոր թափօր, որուն կը մասնակցին մանուկները, իրենց ձեռքերուն մոմեր բռնած ու ձիթենիի եւ արմաւենիի ճիւղր բարձրացուցած: Այս բոլորը կը խորհրդանշեն ժողովրդային այն դիմաւորումը, որ ցուցաբերուեցաւ Զրիստոսի Երուսաղեմ մուտքի պահուն:

Այս տօնին խորհուրդն ու մթնոլորտը Կիրակի առաւօտուն տիրապետող էին մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, ուր մանուկներու գունագեղ ներկայութիւնը յատուկ եռանգ մը կը բաշխեր շրջապատին:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, որ նոր վերադարձած էր Անթիլիասէն, մասնակցելէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգային Իշխանութեանց ժողովներուն, Ծաղկազարդի տօնին առաւօտուն Ս. Պատարագ մատուցեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ եւ առաջնորդեց Թափօրը:

Յընթացս Ս. Պատարագի, Առաջնորդ Սրբազանը իր պատգամին մէջ անդրադարձաւ Ծաղկազարդի տօնի խորհուրդին եւ անոր այժմեականութեան: Ան յիշեցուց, որ Յիսուս թէեւ Երուսաղեմ մուտքին արժանացաւ ժողովրդային խանդավառ ընդունելութեան ու դիմաւորումի, սակայն ան նաեւ ականատես եղաւ հոգեւոր արժեքներու հանդէպ ժողովուրդի անտարբերութեան ու նիւթապաշտութեան: Այս մօտեցումով, Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց հաւատացեալներուն, որ կառչած մասն հոգեկան արժեքներու եւ բարոյականութեան, որովհետեւ քրիստոնէութեան այս պատգամը անժամանցելի է ու մեզի կը հասնի նաեւ այսօր՝ նիւթական արժեքներով տարուելու այս օրերուն:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ Դռնբացքի արարողութիւն: Ներկայ հաւատացեալները ապա միասնաբար երգեցին «Կիլիկիա»ն եւ խաչահամբոյրով՝ ստացան Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնը:

ON PALM SUNDAY

LET US ADHERE TO OUR SPIRITUAL VALUES

DECLARED THE PRELATE

On Sunday, April 1st, the Armenian Church celebrated the triumphant entry of Jesus Christ into Jerusalem, known as Palm Sunday.

On this festive day, the altar curtains are opened after being closed at the start of Great Lent, and during Mass children walk in a procession with candles, palms, and olive branches in hand to demonstrate the welcoming of Jesus into Jerusalem.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who had recently returned from a clergy meeting at the Catholicosate in Antelias, conducted Holy Mass and led the procession at Holy Martyrs Church in Encino.

In his sermon, the Prelate reflected on the message of Palm Sunday and how it relates to our lives today, and reminded the parishioners that although Jesus was enthusiastically welcomed and greeted in Jerusalem, He also witnessed the indifference towards spiritual values and worship of material goods. Thus, the Prelate urged the faithful to adhere to spiritual values and morality especially in this material age.

At the conclusion of Mass and the procession, the Prelate presided over the Opening of the Portals ceremony, after which services concluded with prayer and the collective singing of "Giligia". The faithful then approached the Prelate to receive his blessings and to kiss the cross.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.